ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/16

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Տրանզիտ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Տ. Լաճիկյանի (լիազորագիր տրված՝ 05.02.2019թ.)

Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Հ. Նավասարդյանի (լիազորագիր տրված՝ 08.02.2019թ.)

Քննելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից «Գերզանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիայի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից 06.02.2019թ. ներկայացված և 07.02.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/16 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1.«Տրանզիտ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տրանզիտ» ՍՊԸ-ն 06.02.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սուն թվականի հունվարի 24-ին «Գերզանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիայի ձեռքբերման նպատակով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Տրանզիտ» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտը մերժվել է:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Ընկերությունը հայտնել է, որ 2019թ. փետրվարի 1-ին «Տրանզիտ» ՍՊԸ-ն ստացել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ. թիվ 2 արձանագրությունը, որի 3-րդ կետով սահմանված է, որ Ընկերության կողմից ներկայացված ծրարում առկա փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ, մասնավորապես՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ հավելվածներում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները: Իսկ արձանագրության 5-րդ կետով սահմանված է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության կողմից ներկայացված հայտը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետով սահմանված է, որ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19-րդ կետի երկրորդ պարբերությամբ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնա-

կիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընկերությունը հայտնել է, որ «Տրանզիտ» ՍՊԸ-ն հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ և վերը նշված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ Ընկերությունը իր կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը պետք է ներկայացներ բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակով, այլ ոչ թե հաստատեր էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ամփոփելով վերը նշվածը, Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.01.2019թ. թիվ 2 արձանագրության 3-րդ և 5-րդ կետերով ընդունված որոշումները իրավաչափ չեն:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 11.02.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը՝

«ԳԲՔԱ-ԱՄ-2019/16 վարույթում է քննվում ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով բողոքը՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ հեռուստատեսային արտադրանքի համար տաղավարային դեկորացիայի ձեռքբերման նպատակով, ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ Մրցույթ/

գնահատող հանձնաժողովի՝ 31.01.2019 թվականի թիվ 2-րդ արձանագրության 3-րդ և 5-րդ կետով ընդունված որոշումների դադարեցման վերաբերյալ:

Բողոքաբերի կողմից 2019 թվականի փետրվարի 06-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք առ այն, որ ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 31.01.2019 թվականի թիվ 2-րդ արձանագրության 3-րդ և 5-րդ կետով ընդունված որոշումներ իրավաչափ չեն՝ համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի թիվ 526-ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի և վերը նշված գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19-րդ կետի երկրորդ պարբերության:

Պատվիրատուն նշել է, որ տվյալ դեպքում բողոքաբերի բողոքն անհիմն է հետևյալ պատճառաբանություններով. ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 31.01.2019 թվականին «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից գնումների էլեկտրոնային համակարգ՝ armeps.am կայք է ներբեռնվել Մրցույթի մասնակցության հայտ, որի Հավելված 1-ի համաձայն /ընթացակարգին մասնակցելու դիմում/ մասնակիցը հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և հայտի՝ 1-ին, 2-րդ, 2.1-րդ, 3-րդ, 4-րդ և գնային առաջարկ պարունակող 5-րդ հավելվածները ներկայացրել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված, կնիքված տարբերակով:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովը՝ 31.01.2019 թվականի թիվ 2-րդ արձանագրությամբ մերժել է «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոգրյալից հստակ երևում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, քանի որ չի պահպանվել ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի և ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.19-րդ կետի երկրորդ պարբերության պահանջները, ինչը և գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել

է հայտերի բացման նիստում: Բացի դա «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է գնման առարկայի նախահաշվային արժեքը:

Պատվիրատուն հայտնել է, որ վերոշարադրյալից պարզ է դառնում, որ «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի պահանջը հակասում է ՀՀ գնումների մասին օրենքին, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմանը, ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 31.01.2019 թվականի թիվ 2-րդ արձանագրության 3-րդ և 5-րդ կետով ընդունված որոշումների դադարեցման վերաբերյալ բողոքը անհասկանալի է շարադրված, բողոքը ամբողջությամբ անհիմն է, և ենթակա է մերժման:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով նիստի վերաբերյալ ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ԱՄ-2019/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից «Գերզանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տրանզիտ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, մասնավորապես՝ 1-ին, 2-րդ, 2.1-րդ, -րդ, 4-րդ, 5-րդ հավելվածներում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները:

3. Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով «Տրանզիտ» ՍՊԸ-ի 06.02.2019թ. բողոքը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի 11.02.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ

տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.19 ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի կողմից «Գերզանցիկ» պայմանական անվամբ հաղորդման դեկորացիայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման Ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Տրանզիտ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 31.01.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրել է, որ «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, մասնավորապես՝ 1-ին, 2-րդ, 2.1-րդ, -րդ, 4-րդ, 5-րդ հավելվածներում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները:

Նույն արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Պատվիրատուն 11.02.2019թ. գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 31.01.2019թ. «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից գնումների էլեկտրոնային համակարգ՝ armeps.am կայք է ներբեռնվել Մրցույթի մասնակցության հայտ, որի Հավելված 1-ի համաձայն /ընթացակարգին մասնակցելու դիմում/ մասնակիցը հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և հայտի՝ 1-ին, 2-րդ, 2.1-րդ, 3-րդ, 4-րդ և գնային առաջարկ պարունակող 5-րդ հավելվածները ներկայացրել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված, կնիքված տարբերակով:

ԳԲՔԱ-ԱՄ-2019/16 բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը ընդունել է այն փաստը, որ Ընկերությունը իր կողմից ներկայացված Հավելված 1-ում՝ ընթացակարգին մասնակցելու դիմումում, նշել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ: Միաժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնել է, որ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ, քանի որ Ընկերությունը իրականում հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ:

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Պատվիրատուն, մերժելով «Տրանզիտ» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ, հետևյալ պատճառաբանությամբ՝

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ էլեկտրոնային եղանակով համարումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի

արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ***Հայաստանի Հանրապետության <u>ռեզիդենտ չհանդիսացող</u> մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:***

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.19 ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ ***Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:***

Այսպիսով, վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությունը հստակ ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով, ինչը և պահպանվել է Ընկերության կողմից:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի այն պնդմանը, որ Ընկերությունը Հավելված 1-ով /ընթացակարգին մասնակցելու դիմումով/ հայտնել և հավաստել է, որ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և հայտի՝ 1-ին, 2-րդ, 2.1-րդ, 3-րդ, 4-րդ և գնային առաջարկ պարունակող 5-րդ հավելվածները ներկայացրել է՝ հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված, կնիքված տարբերակով, ուստի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է «Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը՝

Ընկերության կողմից ներկայացված ոչ միայն Հավելված 1-ում /ընթացակարգին մասնակցելու դիմումում/ այլ նաև հայտով ներկայացվող բոլոր հավելվածների վրա առկա է «Տրանզիտ» ՍՊԸ-ի կնիքը, որի վրա նշված է Ռուսաստանի Դաշնություն, միաժամանակ արձանագրում եմ, որ Հավելված 1-ում /ընթացակարգին մասնակցելու դիմումում/, որպես հարկ վճարողի հաշվառման համար նշված է տասանիշ թիվ, մինչդեռ՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) կազմված է ութանիշ թվից:

Վերոգրյալից հստակ երևում է, որ «Տրանզիտ» ՍՊԸ-ն հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության ռեզիդենտ, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը պետք է կիրառեր Կարգի 41-րդ կետը և Ընկերությանը հնարավորություն տար շտկելու Հավելված 1-ը:

Այսպիսով, վերը նշված հանգամանքը հաշվի առնելով, գտնում եմ, որ «Տրանզիտ ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Տրանզիտ» ՍՊԸ-ի կողմից 06.02.2019թ. ներկայացված բողոքը բավարարել, մասնավորապես՝ պարտավորեցնել «ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման

ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնելու հանձնաժողովի 31.01.2019թ. թիվ 2 արձանագրության 3-րդ և 5-րդ կետերով ընդունված որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ